

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՔԱՂՈՒՄԻՔ ՍԻՆՈՂԻ ՕՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Յուն. 29. Որոշուեցաւ Ուղունլար գիւղացի (Բորչալուի դաւառ) Աւագ Ղաֆրամանեանցին ընդունել ի շարս կուսակրօն հոգեւորականաց և ուղարկել ժամանակաւոր կերպով Սեանայ վանքը:

Յուն. 29. Ս. Սինօզը հրամայեց՝ մեծ Կեափանակ գիւղի Գրիգոր Տէր Ոսահակեան, Յակօր Եղեանցեան և Գարեգին տէր Ղալարեան քահանաներին, սուտ վկայութիւն տալու համար, Երեանի նահանգական դատարանի արձակած վճռի համաձայն ուղարկել Սեան՝ քսան օր ժամանակով խիստ հսկողութեան տակ ապաշխարելու:

Փետ. 1. Որոշուեցաւ Տփլիսաբնակ Գաբրիւա Զալեանցին ընդունել ի շարս կուսակրօն հոգեւորականաց և զրել միարան Սաղիանու վանքի:

Փետ. 8. Վեհափառ Հայրապետի սրբ. կոնդակի համաձայն Ս. Սինօզը թոյլատրեց պ. Մակար Եկմալեանցին քառաձայն պատարագի արարողութիւնը տարածել և գործադրել մեր եկեղեցւոյ մէջ. այս առթիւ հրամանագրուեցաւ թեմակալ առաջնորդներին՝ ուղարկել իրենց խմբապետներին և կարող անձանց պ. Եկմալեանցի մօտ ուսանելու:

Փետ. 15. Պատուիրուեցաւ Զաֆարաբատ գիւղացի (Էջմ. դաւառ) Արիստակէս Գրիգորեան Զօլոյեանցին ձեռնադրել կուսակրօն սարկաւագ և ընդունել Սեանայ վանքի միարան:

Մարտ. 9. Հրամայուեցաւ Երեանայ Կոնսիստորիային կարգալոյծ անել Դալիդար զաշ գիւղացի (Յոր Բայազետ) Ղազար քահանայ Տէր Ոստաթեանցին:

Մարտ. 31. Հրամայուեցաւ Վանական


կառավարութեան աճուրդի և կրկնաճուրդի օր նշանակել վանքապատկան գիւղերի՝ Վաղարշապատի համար աճուրդ 10-ն և կրկնաճուրդ 15-ն մայիսի. Օշականի համար աճուրդ 12-ն և կրկնաճուրդ 17-ն. Եղեւորդի համար աճուրդ 16-ն և կրկնաճուրդ 20-ն և Մաստարայի համար աճուրդ 22-ն և կրկնաճուրդ 26-ն նոյն ամսի: Յանկացողները կարող են ներկայանալ Վանական կառավարութեան ատենին պատշաճաւոր գրաւականով:

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՍՐԲՈՒԹԵԱՆ ՊԱՆՈՆՔԸ.

«Եւ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրելիք, սրբեցնոք զանձինս մեր յամենայն պիղծութեան մարմնոյ և հոգւոյ, կասարեացոյ զսրբութիւն անխն վասն ձեռնոյ»:

Բ. Կոնք. է. 1:



ԲԻՍՏՈՆԻՈՒԹԵԱՆ առաջին դարու հաւատացեալներն առանց խտրութեան սուրբ էին կոչուում, որովհետեւ այն գիտակցութիւնը կար թէ նոցանից իւրաքանչիւրը դուրս էր կորզուած աշխարհային ապականութեան զրկից՝ ամբողջապէս Աստուծոյ նուիրուելու, սուրբ Աստուծոյ պաշտօնին վայել սուրբ կեանք ունենալու համար: Եւ այս գիտակցութիւնը աւելի կամ պակաս չափով կենդանի է եղել միշտ քրիստոնէական հա-

մայրքների մէջ. եկեղեցին ամէն միջոց գործ է զրել այնպիսի կարգեր սահմանել կեանքի այնպիսի կանոններ տալ և այնպիսի պատկերներ դնել քրիստոնէի առաջ, որ նա իւրաքանչիւր քայլափոխում զգայ իւր սուրբ կոչումը և նորան վերաբերեալ սուրբ պատահանութիւնները յիշէ: Սրբութիւն յիշեցնելու համար են նշանակուած նաեւ Մեծի պահոց օրերը, մեր առաջը զատիկ է, որ Առաքեալի վերոգրեալ խօսքերով ասեմք՝ մի մեծ աւետեաց յիշատակ է վերականգնուցնում մեր սրտի մէջ, Բրիտանի ս. յարութեամբ յաւիտեանս յաւիտենից ամբողջ մարդկութեան տուած այն աւետեաց յիշատակը, թէ Աստուծոյ հնազանդելով՝ Սորա սուրբ կամքին համաձայն սուրբ կեանք վարողները Սորա որդիք պէտք է կոչուին և այն յաւիտենական երանաւէտ կեանքին հասնեն, որը ձեռք բերաւ Աստուծոյ Միածին Որդին, սրբութեամբ յաղթելով մեղաց և մահու: Եւ որովհետեւ այդպիսի աւետիք ունինք՝ յատկապէս այս ապաշխարութեան օրերում հարկաւոր է լաւ մտածել ու կշռել, թէ ինչպէս պէտք է սրբենք մեր անձը մարմնոյ և հոգւոյ պղծութիւններից, որպէս զի համարձակութիւն ունենանք սուրբ Աստուծոյ առաջն ելնելու և Աստուծոյ որդիների համար պատրաստած անմահական ժառանգութեան արժանանալու:

Հարցնենք առաջ՝ որո՞նք են մեր մարմնի պղծութիւնները. բայց երեւութիւն աւելորդ է այդ հարցումը, որովհետեւ մարդու բարոյական զգացումը պարզ ասում է, թէ ինչն է պիղծ. բայց ինչպիսի է, թէ որչափ զարգացած է մեր մէջ այդ զգացումը և որչափ ենք լսում Սորա ձայնին: Իրօք տեսնում ենք յաճախ որ մարդոց աչքը պղծութիւնների վարձեցնելով կարելի է այնտեղ հասնել, մինչ նոցա բարոյական զգացումն այլևս չլիքաւորուի պիղծ բաներից այլ ընդհակառակն սկսեն պաշտպանել մինչև իսկ թէ քննական այդ է և այդպէս էլ պէտք է լինի: Մեր ժամանակակից հասարակութիւնն արդէն որոշ չափով այդ աստիճանին հասել է, որ անողիւս ստախօս կաշառակերս վաշխառու մարդն անբարոյական է և պատուաւոր ընկերու-

թեան անդամ լինել չի կարող՝ նա այդ շատ լաւ հասկանում է. բայց որ անբարոյական է ու անպատիւ նաեւ այն մարդը, որի մարմինը որկրամարտութիւնից իւր բնական ձեւն ու դուրաթեքութիւնը կորցրել է, որի դէմքն այլանդակուել է արբեցողութիւնից և ուղեղը դանդի մէջ գոլորշիացել, որի ջղերը չարացել են և արիւնը թունաւորուել բղջախոհութիւնից՝ Աստուծոյ նմանութեամբ գծուած պատկերի վերայ զարշափել զրոշմը դնելով— հասկանալ այդ մենք այլ ևս չենք կամենում և թոյլ ենք տալիս, որ այդպիսիներն իրր'է պատուաւոր մարդիկ ճանաչուին և մուտք ունենան ամէն տեսակ ընկերութեան մէջ, ինչպէս. նորա համար ի հարկ է, որ մեր բարոյական զարգացումը եղծուել է: Մեր մէջ արմատացել է այն համոզումը, թէ իսկական կեանքը մարմնի կեանքն է, և ուրեմն իրաւունք ունինք մեր ձեռքն եղած բոլոր միջոցները գործ դնելու, որպէս զի քաղցրացնենք այդ կեանքը: Լսել ենք աւետարանի ասածը, թէ զրոյց եկածը պիղծ է, ներսից եկածն է՝ պղծում մարդուն, և այդ վտեմ ճամբաւով իւր ըստ քմաց մեկնելով ու պատրուակ բռնելով՝ չենք կամենում մտածել այլ ևս, թէ հէնց մեր սրտից բխած պիղծ ցանկութիւններն են պատճառ, որ մեր մարմնին տալիս ենք աւելի քան պահանջ ունի և տանել կարող է, և այդպիսով՝ հոգւոյ սուրբ նպատակներին ծառայելու կոչուած մարմինը ինքն է ի վերջոյ իշխան դառնում և ստրկացնում մեր հոգին, բայց չկարողանալով այդ իրեն անպայել իշխանական դիրքի մէջ մնալ՝ քայքայուում է ու ապականութեան մատնուում:

Սակայն մարմնոյ պղծութիւնը չէ միայն ինչպէս առաքեալի խօսքից տեսնում ենք, որ մեր հոգին ստրկացնել կարող է. սա ևս իւր պղծութիւններն ունի: Թէպէտ մեր մարմինն ու հոգին այնպէս սերտ կերպով կապուած են միմեանց հետ, որ մէկի վերայ եղածն անպատճառ միւսի վերայ ևս ազդում է՝ կան այնուամենայնիւ պղծութիւններ, որոնք աւելի մեկին կամ միւսին յատուկ են: «Որկրամարտութեամբ և մասամբ նորին» պղծում ենք աւելի մեր մարմինը, միւս մահացու մեղքերով՝

«Հպարտութեամբ և մասամբք նորին» նախանձու և մասամբք նորին բարկութեամբ և մասամբք նորին ծուլութեամբ և մասամբք նորին աղաճութեամբ և մասամբք նորին պղծում ենք մեր հոգին և բուն հոգեորդ կամ նոյն իսկ հոգեկան զործունելութեան համար անպէտք դարձում։ Առնենք օրինակ վերջինն այս մահացու մեղքերից և նորա մի մասը միայն՝ արծաթսիրութիւնը։ յայտնի՜ չէ միթէ ամէնքին թէ որ աստիճան այս անտար մարդուն նուաստացնել՝ այն հոգին որ տիեզերքի խորքերը սաւառնելու և ամբողջ բնութեան տիրելու իշխանութիւն ունի որ և երբ լեցուած է օր. եղբայրսիրութեան գորովով կարծես մեր կուրծքից դուրս թռչել է կամենում և «գիրկս եկէք միլիոններ»* բացականչում — սեղմել, ձմռել և զրամի մի փոքրիկ քսակի մէջ տեղաւորուելու ընդունակ դարձնել կարող է։ Իսկ նախանձը, իսկ բարկութիւնը, երբ այն աստիճան կուրացնում են մարդուն որ հարազատ հօրն ու մօրը դահճի ձեռքը մատնելուց, սեփական զուակին իւր ձեռքով սրասողոգ անկուց չի զարհուրում։ Եւ ծուլութիւնը — ինչպէս խեղձացնում և մեղկացնում ժանգոտ ու փաած մի գործիք է դարձնում մեր հոգին որ փշրուում է ապա ամենաշնչին պատահարի առաջ, մինչ աշխատանքի մէջ սրուելով մի հատու թուր կլինէր որ երկինք ու երկիր նուաճել կարող էր։ Ըստ երեւութին այսպիսի բնաւորութիւն չունի հրապարտութիւնը, որով ուռչում փքում է մարդ ու խոշոր երեւում բայց ո՞վ չգիտէ, որ ուռչելը մեծութեան և զօրութեան նշան չէ և անմիտ ու անբովանդակ սնապարծութիւնից բոլորովին տարբեր է, երբեմն սխալմամբ նորա հետ շփոթուող՝ վեհանձն ինքնագիտակցութեան զգացումը։ Իսկական հպարտութիւնը չնչին հօգու արտացոլումն է և առհասարակ բոլոր մահացու մեղքերն այն ընդհանուր յատկանիշն ունին որ մարդու ուժերը ջլատում են և հոգին երկչուութիւն դեղեկոտ փորձութիւնների հանդէպ անկայուն դարձնում։ Այն ոյժը որ բարկութեան նախանձի հպարտութեան մէջ երեւան է գալիս՝ կեղծ

է և անցողական, ինչպէս և մարմինը կեղծ ոյժ է որո՞՞ք գնում որկրամբութեան կամ բղջարոտ հոգեկան մէջ. երկու դէպքում ևս հետեւանքը ուժասպառութիւն է ու անկումն։

Ահա այս պատճառաւ մեծ խորհուրդ ունի Առաքեալի յորդորը՝ «կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ»։ Այն հոգեոր և մարմնաւոր տկարութիւնը՝ այն երկիւղը որ անհրաժեշտ հետեւանք է պիղծ կեանքի պատճառաւ յառաջ եկած բարոյական անկման՝ տեղի չի ունենայ ամենեւին կամ լիւնելուց յետոյ կրկին կփարատուի հեշտութեամբ, եթէ Առաքեալի յորդորը լսենք և Աստուծոյ երկիւղը ունենանք մեր առաջնորդ ամէն քայլափոխում։ Աստուծոյ երկիւղը յիրաւի մի զօրաւոր խթան է, որ մեզ ստիպում է սրբութիւն կատարել՝ սուրբ լինել և սուրբ գործեր ունենալ։ Այդ երկիւղը մեզ չէ նուաստացնում և տկարութեան զգացում չէ յառաջ բերում մեր մէջ, այլ ընդհակառակն ոյժ է տալիս և սնուցանում այն երկնաւոր առաքինութիւնը որի համար մեր Եղիշէն ասում է. «Իրոց օգիքն թուրացեալ են յերկնաւոր առաքինութիւնէն, յոյժ ընդ ահիւն անկեալ է բնութիւն մարմնոյ, յամենայն հոգմոյ շարժի և յամենայն բանէ խռովի և յամենայն իրոց դողայ, երազագէտ է այնպիսին ի կեանան իւրում և յանդիւստ կուրուսան յուզարկի ի մահուան իւրում»։ Երկիւղը մարդու համար շատ բնական զգացում է, և ոչ ոք այս աշխարհի վերայ ազատ չէ նորանից, մեր երկրաւոր կեանքը կախուած է մի թելից և մենք անպաղար երկիւղի մէջ ենք՝ մի գուցի կտրուի այդ թելը։ Նայելով թէ ինչպէս ենք ընդունում՝ ուժ ձեռքին է թելի ծայրը, ըստ այնմ և ուղղուած կլինի մեր երկիւղը։ Մինչպէս հեթանոսի կեանքը խաղաղիք է բազդի ձեռքին, ուստի և ամէն մի ջնջին պատահար երկիւղ է ազդում նորան՝ քրիստոնեան Ամենակալ Աստուծուն ճանաչելով իւր կեանքի տէր, Երրանից և միայն վախենում է։ Իսկ վախենում է այն պատճառաւ որ Աստուած սուրբ է և նա այն գիտակցութիւնն ունի որ իւր սղծութեամբ արժանի չէր այդ սուրբ Աստուծոյ շնորհած արեւը տեսնելու, բայց որովհետեւ Աստուած

նորա համար մի անողորմ դատաւոր չէ՝ որ նորա պղծութիւնների համապատասխան պատիժ տար և կորստեան մատնէր նորան։ այլ մի բարեգութ հայր՝ որ սրբել և իրեն արժանի դարձնել է կամենում՝ ուստի վախենալ Աստրծուց չի նշանակում պատժից վախենալ։ այլ պատկառել մի պաշտելի և յանձափս սիրելի էակից՝ աչքի առաջ ունենալ ամէն բոպէ մեր Երկնաւոր Հօր սրբութիւնը և ջանալ սուրբ լինել։ որպէս զի չվշտացնենք Նորան և չլրկենք մեզ Նորա սիրուց և զթութիւնից։

Սրբութիւնը զօրութիւն է. որչափ սուրբ լինենք հոգեով ու մարմնով՝ նոյնչափ աւելի վստահութիւն կունենանք սուրբ Աստուծոյ վերայ։ որ ամենայն զօրութեանց աղբիւրն է՝ նոյնչափ կպակասի մեր իսկական երկիւղի զգացումը։ Դորա փոխարէն իւրաքանչիւր պղծութիւն հեռացնում է մեզ Աստրծուց և երկիւղալի ու անապահով դարձնում մեր գրութիւնը։ Սկզբում գուցէ շատ զգալի չէ մեզ այդ. մեզ այնպէս է թուում թէ աներկիւղ ու անպատիժ կերպով կարող ենք թոյլ տալ. որ մեր հոգին ու մարմինն զրօսեն, ինչպէս իրենց ցանկութիւնները թելագործ են. բայց շուտ յետոյ ստիպուած պէտք է լինենք խոստովանել. որ մեր առաջը կորստեան անդունդ է և եթէ կանգ չառնենք ու ետ չդառնանք՝ աւելի ու աւելի արագ կզլորուինք։ մինչև որ մի բոպէ կգայ. երբ ուշ կլինի այլևս կանգնելն ու դառնալը։ Հոգին անտեսանելի է և մեր հոգեւոր պղծութեանց հետեանքները շատ անգամ մութ են մնում մեզ համար. սակայն նոյնչափ պարզ է և շօշափելի մարմնոյ պղծութեանց յառաջ բերած արդիւնքը. մարդիկ տեսնում են այն և զարհուրած հարցնում՝ ինչպէ՞ս եղաւ. մինչդեռ հարցի պատճառ չկայ։ Եթէ ուրիշ փաստեր իսկ չլինէին, թէ մի արդարադատ բազուկ է կառավարում տիեզերքը և հատուցումն պահանջում մեր բոլոր գործերի համար՝ այս մէկը բաւական էր. բաւական էր այն զարհուրելի հետքերը դիտել. որ իւրաքանչիւր պղծութիւն թողնում է սերունդէ սերունդ մարդոց հոգու և մարմնի մէջ։ Աստուծոյ արդարադատ բազուկից խոյս տալ ոչ մի տեղ մենք չենք կարող. բայց կարող

ենք Նորա գծած ճանապարհներով ընթանալ վախենալ Նորանից և Նորա սրբութեան օրէնքը դործ զնել. հակառակ դէպքում՝ մէկ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ։



ՄԵՐ ՍՈՌՈՐ ՀԱՐՑ ԴԱՒԵՆՈՒԹԻՒՆԸ

Այս վերնագիրը կրող մի փոքրիկ դրօշակ է ուղարկուած մեզ Կ. Պոլսից. որի հիղինակը՝ Աղարեան Պատրիարքին շրջապատող հայ—կաթողիկ վարդապետներից մէկը, նպատակ է դրել ցոյց տալ թէ, մինչ «հանդարտ խաղաղ» և երջանիկ գոյութիւն ունենալու փափագով՝ վանայ ժողովուրդը Հռովմէական եկեղեցւոյ զիրկը վերադարձեր է. (վերադարձնել) խիստ օրինաւոր և աստուածահաճոյ գործ է կատարել. Հայոց եկեղեցւոյ նախնի սրբազան հայրապետների շաւղով է գնացել Այսպիսի գրուածքների * դէմ հերքում գրելը ապարդիւն աշխատանք կլինէր. յայտնի է կաթողիկ եկեղեցականների փաստաբանութեան եղանակը։ Նրր Փրկիչը Պետրոս առաքելալին երեք անգամ «Արածեա՛ զոչխարս (կամ զգառինս) իմ, աւսաց՝ սա իւր երեք ուրացութիւնները յիշեց և տրտմեց. հասկացաւ թէ որչափ ողորմած էր Տէրը դէպի ինքը, որ չնայած այն ամօթալի ուրացութեան՝ դարձեալ նախկին առաքելական կոչմանն էր հրաւիրում—և խղճահաւորութեան, երախտագիտութեան ու սիրոյ

* Ինչպէս յազգևերից ճշդիկացանք, նոյն ոգով մի գիրք է հրատարակել Քրիստոսի շնորհաւոր Հայր Եսայիան, որ հայի կոտորածների ժամանակ մեծ աղետիկ համեց իրեն. հայոց դասի ամենաեղանդուն պաշտպաններից մէկը։ Ձեռք զարմանում, որ կարողիկ պատեր յանուն Քրիստոսի սկսած գործը վերջն ի շահ պապական աթոռի դարձեց (ի՞նչ որ պապը Քրիստոսի փոխանորդն է նորա համար). բայց շահ ցանցանք այս գրքի մասին «Հանդիս Անտիոքայի մէջ գրած լեւոնդատրեան ներքոյ Հ. Յ. Տ. աստերը՝ Միսիստիան հայերի ամենահամարելի երկայացուցչի ստորագրութիւնը կարդալով, որ ներկանիկ պատճառաբանութիւնը բոլր զանկով հանդիսէ՛ գովում է, կամ գուցէ աւելի ճիշտ կլինէր ասել՝ ստիպում է գովել նպատակը։